

ատենակալներու միջև գոյութիւն ունեցած գժտութեան պատճառով՝ թագաւորը չկրցաւ անմիջապէս կատարել իր խոստումը, այլ միայն թագաւորազուն իշխանը՝ Յովհաննէս (եաքէն՝ Յովհաննէս Ա., թագաւոր Արագոնի, 1387—1395) իր հօր խոստումը կատարելու համար յայտարարեց Լեւոնի՝ վեց ամսէն յանձնել հինգ զինուած ցոկանաւ :

Լեւոն այսքանով չէր գոհանար սակայն :


Մնացածը լրացնելու եւ մանաւանդ զբազան արգիւնք մը ձեռք բերելու համար որոշեց զիմել Ֆրանսայի եւ Անգլիայի թագաւորներուն, որոնց վրայ մեծ յոյս դրած էր :

Եւ համբայ ելաւ :



ԺԴ

Լեւոն ի Պարիս



Եւ Պարիս չհասած՝ Լեւոն անգամ մըն ալ Ավինեոն այցելեց, ուր հասած պիտի ըլլայ 1384 թ. յունիսի 1-ին . վասն զի նոյն տարւան մայիսի 28-ին, Հոգեգալտի նախընթաց օրը, Լեւոնի երկրորդ անգամ Մոնպելլիէ մտնելն եւ յաջորդ առտու անկէ մեկնիլն արձանագրուած է վերոյիշեալ *Petit Thalamus*-ի մէջ, եր. 409, այս բառերով . « Item (1384), la vigilia de Pantacosta que era a XXVIII de mai, tornnet a Montpellier lo sobre dich senhor rey dErminia tornan dArago e dEspanha, e parti lendeman anan sen en Fransa vers nostre senhor lo rey. »

Ամիս մը վերջ, այսինքն յունիսի 30-ին, խուսն բազմութեան առաջնորդութեամբ եւ հանգիսաւոր արարողութիւններով Պարիս մտած է Հայոց թագաւորը, իր ոսկեճամուկ զգեստն հագած, արքայական թագն ի գլուխ եւ մական ի ձեռին, բարեւելով զինք ողջունող հեաաքբեր ժողովուրդը :